ԶԱՐՈՒՀԻ ԴԱՎԻԹԻ
ՂԱԶԱՐՅԱՆ

Դաշնակահարուհի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Դաշնամուրային ֆակուլտետի Կոնցերտմայստերական ամբիոնի վարիչ, դոցենտ
E-mail: ghzaryan-zaryhi@mail.ru
Doi: 10.58580/18290019-2023.1.64-90

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝ 2.4.2024 թ.,
Գրախոսներ՝ 23.3.2024թ. և 19.3.2024 թ.,
ընդունվել է տպագրության՝ 20.4.2024 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 2.3.2024 թ.:

ԿՈՄԻՏԱՍ «ՄՇՈ ՇՈՐՈՐ»
(մեկնաբանության մի քանի դիտարկումներ)

Ամփոփում

Հոդվածը նվիրված է մեծ կոմպոզիտոր Կոմիտասի դաշնամուրային ժառանգությանը՝ «Մշո շորոր» խորեոգրաֆիկ սյուիտին: Ներկայացված են որոշ պարերի նոտային օրինակները: Խորեոգրաֆիկ շարքը բաղկացած է վեց պարից՝ «Շարան», «Շորոր», «Նազ», «Թռնոցի», «Կոխ», «Ճոշ»: Այս հոդվածը տալիս է բոլոր պարերի նկարագրողական տեսական վերլուծությունը փոխանցելով տարբերնույթ հնագույն ծիսական ժանրային պատկերների առանձնահատկությունները: Խորեոգրաֆիկ սյուիտն ունի խորապես ազգային ոճ և երանգ, որոնք միասին մարմնավորում են ծիսական պարերի գաղափարը:

Բանալի բառեր. *Կոմիտաս, «Մշո շորոր», դաշնամուրային ժառանգություն, խորեոգրաֆիկ սյուիտ, պարեր, ցիկլ, «Շարան», «Շորոր», «Նազ», «Թռնոցի», «Կոխ», «Ճոշ», պարերի տեսական վերլուծություն, ազգային ոճ, երանգ:*

Abstract

Pianist, Docent, Head of the Concertmaster Department of the Piano Faculty of Yerevan State Conservatory after Komitas ***Zaruhi David Ghazaryan. - «"Msho Shoror (Sway dance of Mush) "by Komitas (some aspects of interpretation) ».***

The article explores the piano legacy of the great composer Komitas through his choreographic suite "Msho Shoror". It presents note examples of individual dances within the suite cycle, which consists of six dances: "Sharan", "Shoror", "Naz", "Trnotsi", "Kokh", "Tchosh". The article gives a descriptive theoretical analysis ot all dances, highlighting the features and imagery of various ancient genres. The choreographic suite exemplifies a deep national style and color, reflecting the profound essence of ritual dances.

Key words: *Komitas, "Msho shoror", piano legacy, choreographic suite, dances, cycle, "Sharan", "Shoror", "Naz", "Trnotsi", "Kokh", "Tchosh", theoretical analysis of all dances, national style, color.*

Абстракт

Пианистка, доцент, заведующая кафедрой концертнейстерства фортепианного факультета Ереванской государственной консерватории им. Комитаса ***Заруи Давидовна Казарян. - «"Мшо шорор" Комитаса (некоторые аспекты интерпретации)».***

Статья посвящена фортепианному наследию великого композитора Комитаса - хореографической сюите "Мшо шорор ". Представлены нотные примеры отдельных танцев. Цикл состоит из шести танцев: "Шаран ", "Шорор ", "Наз ", "Трноци ", "Кох ", "Тчош ". Я статье дается описательный теоретический анализ всех танцев, передавая особенности образов разнообразных старинных жанров. Хореографическая сюита имеет глубоко национальный стиль и колорит в совокупности олицетворяя глубокую мысль обрядовых танцев.

Ключевые слова: *Комитас, "Мшо шорор", фортепианное наследие, хореографическая сюита, танцы, цикл, "Шаран", "Шорор", "Наз", "Трноци", "Кох", "Тчош", теоретический анализ танцев, национальный стиль, колорит.*

ՏՈՊՉՅԱՆ ՂԵՎՈՆԴՅԱՆ

Նախաբան

Հայ երաժշտության պատմության կարևորագույն էջն սկիզբ է առել Կոմիտաս Վարդապետի ծնունդով (1869-1935 թթ.):

Կոմիտասի ստեղծագործական ժառանգությունը հիմնված է հայ ժողովրդական երգերի, ինչպես նաև միջնադարյան տաղերի և շարականների վրա: Նրա երաժշտության մեջ կան և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր ստեղծագործություններ: Գրել է բազմաթիվ երգեր, խմբերգեր, ինչպես նաև դաշնամուրի համար ստեղծագործություններ:

Ձեռքի տակ ունենալով միայն ժողովրդական երգի հումքը՝ իր հանճարի ուժով նա ստեղծեց հայ պրոֆեսիոնալ երաժշտության լեզուն՝ լադաինտոնացիոն համակարգը, աննախադեպ պոլիֆոնիան, հայ երաժշտական ֆոլկլորագիտությունը, ի վերջո՝ հայ դասական երաժշտական մշակույթը:

«Մշո շորոր»

Նրա դաշնամուրային երկերից են «Յոթ պարեր», «Մշո շորոր» խորեոգրաֆիկ սյուիտը, ինչպես նաև իր կողմից փոխադրած ժողովրդական երգերի մշակումները դաշնամուրի համար՝ «Յոթ երգ», «Մանկական նվագներ» (12 պիես ժողովրդական թեմաներով), «Փոքրիկ պոլիֆոնիկ սյուիտ»: Դաշնամուրային երկերում առկա են այն բոլոր վերը նշված հատկանիշները, որոնցով պայմանավորված է Կոմիտասի ոճը (լեզուն, ժողովրդական ոգին): Դրանք իրենց ուրույն արտացոլումն են գտել նաև իր դաշնամուրային ստեղծագործություններում:

Մեծն Կոմիտասի դաշնամուրային ստեղծագործությունները կոմպոզիտորի թողած երաժշտական ժառանգության համեմատաբար փոքրածավալ, բայց և խիստ ինքնատիպ բաժինն են կազմում:

Կոմիտասի դաշնամուրային ստեղծագործություններն ունեն որոշակի արտահայտված ազգային երանգ և՛ իհարկե, անուրանալի գեղարվեստական արժեք են ներկայացնում: Կոմիտասի դաշնամուրային երկերի շարքում ինքը՝ հեղինակը, առանձնակի նշանակություն է տվել մեծածավալ «Մշո շորորին» (երկրորդ խմբագրությամբ)՝ նկատելով, որ «դա սոսկ պար չէ սովորական իմաստով, այլ՝ ժողովրդական զանգվածային խորեոգրաֆիայի երաժշտական պատկեր՝ բազմատարր բովանդակությամբ, որը պարունակում է նաև հերոսական նույնիսկ մարտաշունչ պահեր՝ վիպաքնարական զեղումների կողքին» (1.):

Կոմիտասի «Մշո շորորը» ժողովրդական պարային ընդարձակ տեսարան է, որն իր մեջ ընդգրկում է տարբեր բնույթի հինավուրց (հեթանոսական) պարեր: Կոմիտասի արխիվում հայտնաբերվել է մի թերթիկ (ձեռագիր N 715), որի վրա գրված է եղել (2.).

1. Շարան, 2. Շորոր, 3. Նազ, 4. Թռնոցի, 5. Կոխ, 6. Ճոշ:

Վերջում՝ առանց թվահամարի ավելացված է նաև Ճոր, որը նշանակում է ճոճվելով պար («Նազ պար»-ի ժողովրդական մի այլ անվանումն է):

«Մշո շորոր» պարերի երաժշտությունը Կոմիտասն իրականացրել է ոչ միայն ամբողջությամբ, այլև ըստ առանձին բաղկացուցիչների: Ըստ 497ա բնագրի, որն ամբողջապես վերնագրված է «Մշո շորոր» հետևյալ հաջորդականությամբ՝ (3.).

1. Շարանի, 2. Ծանր պար, 3. Թռնոցի, 4. Կոխ (ավելացված հատված, որը գտնում ենք 497 բ-ում), 5. Քոչարի, 6. Ճոճ (նազանը), 7. Ճոշ (զինապար) (4.):

«Մշո շորոր»-ն սկսվում է նախանվագով, որը պայմանական կոչվում է «Շարանի» (ըստ Կոմիտասի այն անվանել է «Նախանվագ»):

«Շարանի»-ի երաժշտությունը նկարագրում է պարողների՝ շրջան կազմելու տեսարանը, այստեղից էլ՝ պարի (աշխույժ, առույգ) բնույթը: Կատարողը պետք է նկատի ունենա, թե ինչ ազգային գործիքների հնչողություն է ենթադրվում նմանակել ըստ Կոմիտասի: Այստեղ դրանք են նայը (դուդուկ), զուռնան և թմբուկը:

«Շարանին» - (Allegro vigoroso) սկսվում է զուռնայի հանկարծակի, ուժգին «գոչումով»՝ կոչնակով (մուտքով), որն ասես ազդարարում է պարի սկիզբն՝ իր շուրջը համախմբելով պարողներին՝ թմբուկի նվագակցությամբ (ձախ ձեռքում): Թեման հիմնվում է կրկնվող նոտաների հիման վրա (e, dis, fis) աջ ձեռքում:

«Շարան»
"Sharan"
"Шаран"



Այս երաժշտական պատկերը կազմված է 2 հատվածից:

Կատարողը պետք է ուշադրություն դարձնի հատկապես 5-րդ տակտում, աջ ձեռքում dis-ների խմբին, կարծես հակադրվող d-բեկարները ձախ ձեռքում, 1-ին հատվածում:

Կատարողական հատուկ մոտեցում է պահանջում 11-րդ տակտում թույլ մասի վրա դրված tenuto-ն, որը տիպիկ է հայկական երգ ու պարին և յուրահատուկ ինտոնացիոն երանգ է հաղորդում դրվագին:

2-րդ հատվածը շարադրված է fis մաժորում: Այստեղ թեման մոդուլացիա է կատարում H մաժոր տոնայնություն, ինչը կատարողից պահանջում է յուրովի մեկնաբանում, հատկապես, որ Կոմիտասը 2-րդ հատվածի համար նշում է՝ «գոչումով»:

«Շարան», 2-րդ հատված
“Sharan”, 2nd part
“Шаран”, 2-я часть



Հատկապես կարևոր դեր են կատարում ֆակտուրայում ծանր շեշտերը տակտի վերջին հնչյունների վրա, որոնք կատարելիս պետք է հատուկ ընդգծել և լսելի դարձնել ընդհանուրի մեջ: Ոտնակը ևս յուրահատուկ երանգ է հաղորդում այս հատվածում, միավորելով 4 տակտ: Այս երաժշտական պատկերն առավել հստակ մեկնաբանում կարող է ստանալ կատարողի կողմից կառուցվածքի կոմպոզիցիոն հնարների վերլուծելու և այդ կոմպոզիցիոն միջոցների նշանակությունն ըմբռնելու միջոցով: Կատարողը պետք է կարողանա գտնել արտահայտչամիջոցներ դուդուկին, թմբուկին և զուռնային բնորոշ տեմբրային գույները դաշնամուրով վերարտադրելու համար, ինչպես նաև ճիշտ փոխանցել խրոխտ և խանդավառ տրամադրությունը, սակայն դա չպետք է վերածվի կոպտության, այլ պետք է արտահայտի պարի ազգային ոգին:

«Ծանր պար» (Largo): Հանդիսավոր այս պարն ունի ծիսական բնույթ, որը պարում էին բոլորը միասին՝ մեծից փոքր: Թմբուկի մի քանի հարվածները պարողներին հրավիրում է շրջան կազմելու, զուռնան նվագում է մեղեդին և շրջանն սկսում է ճոճվել հանդարտ շարժումներով: Կոմիտասը նշում է տեմպը «Շատ ընդարձակ» (largo):

Մեկնաբանողը պետք է կարողանա փոխանցել ձախ ձեռքում հնչող, կարծես «ճոճվող» նվագակցությունը, որին հաջորդում է ազատ, իմպրովիզացիոն բնույթի մեղեդու մուտքը՝ հիշեցնելով դուդուկի հնչողությունը: Մեղեդու բնույթը նշվում է «արքավայել ու վեհափառ» (maestoso):

Այս պարը ևս բաղկացած է երկու հատվածից: Երկրորդ հատվածը հակադրվում է առաջին հատվածի մեղեդուն: Կարծես հանկարծակի մուտք է գործում թեթև պարային մեղեդին (in poco mosso):

«Ծանր պար»
“Tsanr par”
“Цанр пар ”





*Կատարողից պահանջվում է այս պարը կատարել թեթև, աջ ձեռքում, որպես նվագակցություն հնչող կրկնվող ութերորդականները՝ **teneramente** (քնքուշ, փափուկ), իսկ ոտնակն այստեղ պահվում է՝ միացնելով 9 տակտ, որը շատ պարզ ու հետաքրքիր երանգ է ստեղծում: Այնուհետև, կարծես նորից վերադառնում է սկզբնական տրամադրությանը, որով սկսվել է «Ծանր պարը»:*

«Ծանր պար»
“Tsanr par”
“Цанр пар ”



Կոմիտասն այստեղ թեման շարադրել է կարծես վարիացիոն-տարբերակային ձևով՝ փորձելով ամեն անգամ նոր երանգ հաղորդել թեմայի կրկնողությանը:

«Ծանր պարը» ավարտվում է խորհրդավոր և ազատ ռիթմով դեպի «խորք» գնացող մեղեդիով, որը կատարողին հուշում է կարճ, հառաչանք հիշեցնող հնչյունների խմբի միջոցով (նախավերջին տակտում) ստեղծել «հեռանալով» մարող մեղեդու պատրանք:

Կատարողը պետք է նկատի ունենա բնորոշ արտահայտչամիջոց հանդիսացող պաուզաները, որոնք իմպուլս են հաղորդում պարին: Սակայն պաուզան բխում է նախորդող նոտայից, որը գրված է սուր և կտրուկ ստակկատո շտրիխով:

«Թռնոցի»
“Trnotsi”
“Трноци”







Այդ շտրիխի միջոցով կատարողը պետք է ցույց տա պարային ռիթմի բնույթը:

Հատկապես մեծ ուշադրություն է պետք դարձնել ձախ ձեռքում գրված սինկոպաների և շեշտերի ընդգծման վրա, որոնք նույնպես առանձնահատուկ երանգ են հաղորդում պարային ռիթմին:

Թռնոցին ավարտվում է փոքրիկ երաժշտական հատվածով, որը կարծես նախապատրաստում է հաջորդ պարային ներկայացումը:

ԿՈԽ (Allegro gioiosso) - Ուրախ, աշխույժ և թեթև պար է, որը պետք է կատարել պարին հատուկ տրամադրությամբ և կենսուրախությամբ: Պարն սկսվում է ակտիվ և խաղացկոտ բնույթով, որին նպաստում են թեթև տասնվեցերորդականները 2/4-րդ չափում: Կարևոր դեր ունեն սինկոպաները և պահվող բասերը ձախ ձեռքում, որոնք հատուկ են հայկական պարերին, ինչպես նաև պաուզաները ձախ ձեռքում տակտի ուժեղ և թույլ մասերում, որոնք յուրահատուկ նրբագեղ երանգ են հաղորդում պարին՝ ընդգծելով աշխույժ և խաղացկոտ բնույթը:

Այս պարը հիմնված է թեմայի կրկնողության վրա տարբեր օկտավաներում, որը կատարողից պահանջում է յուրահատուկ մոտեցում միապաղաղությունից խուսափելու համար:

Հատկանշական է այն փաստը, որ Կոմիտասը թեմայի կրկնողության հնարքին դիմելով՝ ամեն անգամ նորովի է ներկայացնում այն: Պարային մեղեդին մշակվելուց և զարգանալուց, կարծես բարձրակետ ապրելուց հետո վերադառնում է և մարում:

ՔՈՉԱՐԻ (Allegro vivace) – Օկտավների հանկարծակի ներխուժմամբ սկսվում է «Քոչարի» պարը, որը կարծես կրկին բորբոքում է պարողների խանդավառությունը: Կատարողը պետք է կարողանա նախորդող «Կոխ»-ից հետո միանգամից մտնել «Քոչարիի» տրամադրության մեջ և ցույց տալ այս պարի կրակոտ (con fuoco) բնույթը, որը խորհրդանշում է հայ ժողովրդի միասնությունն ու ուժը:

«Քոչարի»
"Kochari"
"Кочари"



Կոմիտասն այս ամենը պատկերել է շատ պարզ միջոցներով: Նա թեման շարադրել է տարբեր օկտավաներում, ինչը թույլ է տալիս խուսափել միապաղաղությունից և նույնական կրկնություններից:

Ճոճ (Andante sostenuto) – Կոմիտասը գրել է այս պարը ի հակադրություն «Քոչարի»-ին, որն ասես «ճոճվելու» տեսարան է հիշեցնում: Կոմիտասն այն անվանել է «նազանք»: Շատ քնարական պար է, որն օրորվող, նուրբ շարժումներով պարում է աղջիկների խումբը:

Մեկնաբանելիս պետք է ուշադրություն դարձնել փոքրիկ լիգաների, որոնք կարծես հառաչանք են հիշեցնում պարի սկզբում, ինչպես նաև պաուզաներին ձախ ձեռքում, որոնք կարևոր արտահայտչամիջոց են՝ փոքրիկ շնչերն արտահայտելու համար:

«Ճոճ»-ի բնույթը, ինչպես հուշում է հեղինակի նշումը, երազկոտ (sognendo) է, որը շատ կարևոր է պահպանել կատարման ընթացքում:

Ճոշ (զինապար) – Allegro ma non troppo

Կոմիտասի ձեռագրում այս պարը նշվում է «Ճոշ», ինչը նշանակում է «Զինապար»՝ զենքերով պար: Այստեղից էլ պարի խիզախ, կրակոտ, աշխույժ (con brio) բնույթը, որն արտահայտված է հստակ ռիթմով:

Այս պարում նկարագրվում է պայքարող ժողովրդի ուժն ու ոգին: Սակայն մեկնաբանելիս պետք է ուշադիր լինել, որ պարի մարտական բնույթը չվերածվի ավելորդ կոպտության: Այն պետք է կատարել արժանապատվությամբ և, ինչպես Կոմիտասն է նշում, con brio (կրակոտ): Կատարողը պետք է կարողանա մեղեդուն հաղորդել ազգային գործիքին բնորոշ երգային հնչողություն՝ փորձելով գտնել տեմբրային նմանություն:

Այս պարի բնույթն արտահայտվում է նաև նրա ռիթմիկ առաձգականությամբ, որը հատկապես հանդիպում է ձախ ձեռքում՝ նմանվելով հարվածային գործիքների հնչողությանը: Այն պահանջում է ամուր ռիթմի զգացողություն, ինչպես նաև պաուզաների և tenuto-ների իմաստային մեկնաբանում, ինչը տիպիկ է հայկական ժողովրդական պարին:

«Ճոշ»
"Tchosh"
"Тджош"





Զինապարն իր մեջ պարունակում է մի քանի տրամադրություններ: Այն սկսվում է աշխույժ, մարտական ոգով, կարծես մեկ շնչով, հասնում է շատ նուրբ մեղեդային էպիզոդին, որը զինապարի մարտական բնույթի հակադրությունն է: Կարևոր է կատարելիս ճիշտ ընդգծել այս բոլոր կոնտրաստները:

Պարի վերջին տակտերը եզրափակում են խորեոգրաֆիկ երաժշտական պատկերը: Հանդարտ և փոքրիկ մեղեդին աստիճանաբար զարգանալով հասնում է էմոցիոնալ, վառ պոռթկումի, որով էլ եզրափակվում է ամբողջ սյուիտը:

Վերջաբան

«Մշո շորոր» խորեոգրաֆիկ սյուիտը, որը խորը ազգային միտք ու կոլորիտ ունեցող ստեղծագործություն է և իր ուրույն տեղն ունի Կոմիտասի թողած դաշնամուրային ժառանգության մեջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Կոմիտաս,* Հայ գեղջկական պարը, /Ուսումնասիրություններ և հոդվածներ, Եր., Սարգիս Խաչենց, 2005 թ.:
2. ԳԱԹ, Կոմիտասի արխիվ (ձեռագիր N 715):
3. ԳԱԹ, Կոմիտասի արխիվ (ձեռագիր N 497):
4. ԳԱԹ, Կոմիտասի արխիվ (ձեռագիր N 497ա, ձեռագիր N 497բ):
5. *Կոմիտաս,* Երկերի ժողովածու, հատ. 6, Եր., Սովետական գրող, 1982 թ.:

Komitas, Armenian Country Dance, /Studies and Articles, Yerevan, Sargis Khachents, 2005.

MLA, Komitas archive (manuscript N 715).

MLA,, Komitas archive (manuscript N 497).

MLA, Komitas archive (manuscript N 497a, manuscript N 497b).

Komitas, Collected Works, vol. 6, Yer., Sovetakan grogh, 1982.

REFERENCES

1. *Komitas,* Hay geghjkakan par', /Usumnasiruthyunner ev hodvatsner., Yer., Sargis Khachentz, 2005 th.
2. MSA, Komitasi arkhiv (dzheragir N 715).
3. MSA,, Komitasi archive (dzheragir N 497).
4. MSA, Komitasi archive (dzheragir N 497a, dzheragir N 497b).
5. *Komitas,* Yerkeri zhoghovatsu, vol. 6, Yer., Sovetakan grogh, 1982 th.

Հեղինակի մասին. *ԶԱՐՈՒՀԻ ԴԱՎԻԹԻ ՂԱԶԱՐՅԱՆ (ծ. 24.12.1972 թ., ք. Երևան, ՀՀ): Ավարտել է՝ 1990-ին՝ Պ. Չայկովսկու անվան ՄԵԴ-ը, 1995-ին՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային բաժինը, 1995-1997 թթ. սովորել և ավարտել է ԵՊԿ ասպիրանտուրան՝ «Դաշնամուր» մասնագիտությամբ: Դասավանդում է՝ 1996-ից ԵՊԿ–ի Մասնագիտական դաշնամուրի և երգեհոնի 2-րդ ամբիոնում, որպես ասիստենտ՝ Ա. Բաբախանյանի դասարանում, 1999-ից՝ նույն ամբիոնի դասախոս, իսկ 2002-ից նաև Կոնցերտմայստերական պատրաստման ամբիոնի դասախոս, 2008-ից՝ դոցենտ: Այս տարիների ընթացքում նրա դասարանը ավարտել են բազմաթիվ ուսանողներ, որոնք այսօր աշխատում են Հայաստանի երաժշտական տարբեր ուսումնական հաստատություններում՝ երաժշտական և արվեստի դպրոցներում, Ռ. Մելիքյանի և Ա. Բաբաջանյանի անվան երաժշտական քոլեջներում, Ռուսաստանի տարբեր քաղաքներում և արտերկրում՝ որպես դաշնամուրի դասատու և կոնցերտմայստերներ: Նրա ուսանողները տարբեր տարիների մասնակցել են՝ «Վերածնունդ» միջազգային մրցույթ–փառատոնում՝ արժանանալով 1-ին, 2–րդ և 3–րդ կարգի մրցանակների, Վրաստանի «Բորժոմի» Միջազգային Երաժշտական փառատոնում՝ «Լավագույն կոնցերտմայստեր» անվանակարգի: Նրանք նաև հանդես են գալիս հանրապետական և քաղաքային տարբեր մրցույթներում որպես նվագակցողներ («Արթ Մյուզիք», Քաղաքապետարանի մրցույթ–փառատոն և այլն): Ղազարյանը հանդիսացել է Հեղինե Տեր–Ղևոնդյանի անվան կոնցերտմայստերների հանրապետական 5-րդ մրցույթի ժյուրիի անդամ, 6-րդ մրցույթի կազմ- կոմիտեի անդամ: 2020–2023 թթ. ներառյալ (4 անգամ) կայացած "Odessa Music Olymp" միջազգային առցանց մրցույթի «Դաշնամուր» անվանակարգի ժյուրիի անդամ: 2023–ին Universe Art International Festival–ի «Դաշնամուր» անվանակարգի ժյուրիի անդամ, ինչպես նաև ապրիլ ամսին կայացած Թամար Շահնազարյանի անվան մենեղգիչների մրցույթի ժյուրիի անդամ: Ունի խմբագրած և կազմած ժողովածուներ, հեղինակ է ուսումնամեթոդական ձեռնարկների, գիտական հոդվածների: Վերջինը՝ 2022 թ. Կոմիտաս թանգարան–ինստիտուտի տարեգրքի Զ հատորում ներառված «Կոմիտասի դաշնամուրային ժառանգության որոշ առանձնահատկությունների մասին» հոդվածն է և նույն թվականին լույս տեսած Առնո Բաբաջանյան «Երգեր» ձայնի և դաշնամուրի համար ժողովածուի խմբագիրն է: 2005-ից հանդիսացել է Կոնցերտմայստերության ամբիոնի քարտուղար: Վերջին տարիներին նաև ամբողջ դաշնամուրային ֆակուլտետի քարտուղարն է: 2022–ի մայիսից հանդիսանում է Դաշնամուրային ֆակուլտետի Կոնցերտմայստերության ամբիոնի վարիչը:*

Կոմիտասագիտություն

About the author: *ZARUHI DAVIT GHAZARYAN (b. 24.12.1972, Yerevan, RA). She completed her education at Yerevan Specialized Secondary Music School after Tchaikovsky in 1990 and graduated from the Piano Department of Yerevan Komitas State Conservatory in 1995. Following this, she pursued a postgraduate course at YSC from 1995 to 1997, specializing in piano playing. Since 1996, she has been teaching at the 2nd Chair of Professional Piano and Organ of YSC, initially as an assistant in A. Babakhanyan's class, then as a lecturer from 1999 onwards. Her career progressed, and she became a lecturer in 2002 and an Associate Professor at the Concertmaster Training Chair in 2008. Throughout her teaching career, many students graduated from her class, who today work in various musical educational institutions of Armenia - music and art schools, music colleges after R. Melikyan and A. Babajanyan, in different cities of Russia and abroad as a piano teacher and concertmaster. Her students have participated in the "Renaissance" international competition-festival, winning 1st, 2nd and 3rd class prizes, and in the "Borjomi" International Music Festival in Georgia, getting an award in the category "Best Concertmaster". They also perform as accompanists in various national and city competitions ("Art Music", City Hall competition-festival, etc.). Ghazaryan also served as a jury member for various prestigious competitions and festivals, including the 5th Republican competition of concertmasters named after Heghine Ter-Ghevondyan, where she was also a member of the organizing committee for the 6th competition. Notably, she participated as a jury member for the "Piano" category of the "Odessa Music Olymp" international online competition for four consecutive years from 2020 to 2023, and in 2023, she served on the jury for the "Piano" category of the Universe Art International Festival. Additionally, she contributed as a jury member for the solo singers' contest named after Tamar Shahnazaryan held in April (2023). She has edited and compiled collected works, authored educational manuals and contributed scientific articles, with her latest publication in 2022. Notably, her article "On Some Features of Komitas's Piano Legacy" is included in volume Z of the yearbook of the Komitas Museum-Institute, and Arno Babajanyan is the editor of the collection "Songs" for voice and piano, published in the same year. Since 2005, she has been serving as the secretary of the Concertmaster Department, and more recently, also as the secretary of the entire Piano faculty. In May 2022, Ghazaryan was appointed as the head of the Concertmaster Department of the Piano Faculty.*

Об авторе: *ЗАРУИ ДАВИДОВНА КАЗАРЯН (род. 24.12.1972, Ереван). Окончила: Специальную музыкальную школу-десятилетку им.П. Чайковского (1990); фортепианное отделение Ереванской государственной консерватории имени Комитаса (1995),аспирантуру ЕГК по специальности «Фортепиано» (1997). Преподает: на 2-й кафедре спец. фортепиано и органа ЕГК, ассистент А. Бабаханяна (с 1996); преподаватель (с 1999); также преподает на кафедре концертмейстерской подготовки (с 2002); доцент (2008). Ее ученики в разныш годы участвовали в международном конкурсе-фестивале «Ренессанс», завоевав призы 1, 2 и 3 степеней, в Международном музыкальном фестивале Грузии «Боржоми» в номинации «Лучший концертмейстер». Также они выступают в качестве концертмейстеров на различных республиканских и городских конкурсах («Арт-музыка», конкурс-фестиваль мэрии и др.). Казарян была членом жюри 5-го республиканского конкурса концертмейстеров имени Эгине Тер-Гевондян, членом оргкомитета 6-го конкурса. Член жюри номинации «Фортепиано» международного онлайн-конкурса «Одесский музыкальный олимп» (2020-2023). В 2023 году член жюри категории «Фортепиано» Международного фестиваля искусств «Вселенная», а также член жюри конкурса сольных исполнителей имени Тамары Шахназарян (апрель 2023). Редактор и составитель сборников, автор учебных пособий, научных статей - «О некоторых особенностях фортепианного наследия Комитаса» (ежегодник Музея-института Комитаса,). Редактор, а сборника Арно Бабаджанян. «Песни для голоса и фортепиано» (2022). Секретарь кафедры концертмейстерства (с 2005). В последние годы является также секретарем всего фортепианного факультета. Заведующая концертмейстерской кафедрой фортепианного факультета (с 2022).*